



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՄ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«11 » 02 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000015

Ձեռնարկողը՝

«ԳԼՈԲԱԼ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ

Երևան, Տերյան փողոց հ.57 բն. 37

Գործունեությունը՝

Նոր-Նորք վարչական շրջանի Գյուղական փողոց 27 հասցեում
նախադասական գործությունների բազմահարկ բնակելի համալիրի կառուցման
աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա
ազդեցության նախնական գնահատման հայկ
Երևան քաղաք

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝

Ա. Դոնյան



Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՇԽԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000015

<11> 02 2020թ.

**Երևան քաղաքի Նոր-Նորք վարչական շրջանի Գյուղանի փողոց 27
հասցեում նախադեսվող բազմահարկ բնակելի համալիրի կառուցման
աշխադանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայք**

Ներածական մաս.

Ձեռնարկող՝
Փաստաթղթի տեսակը՝

«ԳԼՈԲԱԼ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ
Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ

Գործունեության կատեգորիա՝ «Գ» կատեգորիա

Տեղադրման վայրը՝ ք. Երևան, Նոր Նորք վարչական շրջան

«ԳԼՈԲԱԼ ՊՐՈԵԿՏ» ՍՊ ընկերության կողմից նախատեսվում է Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Գյուղանի փողոց 27 հասցեում կառուցել բազմահարկ բնակելի համալիր:

Գործունեությունն իրականացվելու է անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 0.68788հա մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման:

Նկարագրական մաս. Նախագծվող շենքերի համար տրամադրված հողամասը գտնվում է բնակելի և հասարակական շենքերի հարևանությամբ: Տարածքը ասֆալտապատ է, կառուցապատված քանդման ենթակա շինություններով՝ զոդման և ներկման արտադրամաս (706քմ), բոքսեր (39.7քմ), գրասենյակ (36քմ), պահակատուն (76քմ), օժանդակ շինություն (14.5քմ): Տեղ-տեղ հանդիպող հողային ծածկույթի վրա, որտեղ բուսահողի հզորությունը 10-15սմ է, տարածված է կիսաանապատային գոտուն բնորոշ բազմամյա խոտի տեսքով խառը աճած բուսականություն: Ամբողջ հողամասում բուսահողի ծավալը կազմում է 600մ³:

Մինչև 30մ խորության վրա գրունտային ջրերը բացակայում են: Հանուցապատման ենթակա տարածքում մշակութային հուշարձաններ և պահպանության ենթակա տարածքներ չկան:

Նախատեսվում է կառուցել համալիր, որն ունի 6 շքամուռ, նույնականացնելու շքամուտքում՝ 2 վերելակ: Բնակելի համալիրի առաջին և երկրորդ հարկերում



նախատեսված են հասարակական տարածքներ և սենթեր, ստորգետնյա եռահարկ ավտոկայանատեղի՝ 150-170 մետրնայի համար: Երրորդ հարկից սկսած նախատեսվում է 332 բնակարան:

Կառույցի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

Հողատարածքի մակերես – 0.68788հա,

Կառուցապատման մակերես - 2412քմ,

Կանաչապատման մակերես - 2752քմ,

Անջրանցիկ հատված - 1714քմ:

Նախատեսվող գործունեությունն իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա միջավայրի կառույցներին:

Բազմահարկ բնակելի համալիրի էլեկտրամատակարարման իրականացման համար կառուցապատող դիմել է «ՀԷՅ» ՓԲԸ տարածքային համակարգման տնօրինություն՝ համաձայն ԷՄՕԿ-ի 13.2 կետի պահանջների՝ էլ. ցանցին միացման պատվեր ծևակերպելու համար:

Բազմահարկ բնակելի համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն «Վեռլիա Զուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի՝ Գյուրջյան փողոցի հարևանությամբ անցնող ջրատարից:

Գազամատակարարումը, 1200մ³/ժամ բնական գազի ծախսով, իրականացվելու է տարածքում գոյություն ունեցող d=530մմ տրամագծի գազատարից՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության Երևանի գազաֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղի «Երևանի ԳԳՄ» կողմից տրված տեխնիկական պայմաններին համապատասխան:

Շենքի ջերմամատակարարման համար կաթսայատուն չի նախատեսվում, ջերմամատակարարումը իրականացվելու է անհատական:

Շինարարական աշխատանքներն իրականացվելու են ըստ ժամանակացույցի և օրացուցային գրաֆիկի, որի տևողությունը հաշվարկվել է 24 ամիս:

Շինարարության ժամանակ բնառեսուրսից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրանի, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու, կենցաղային նպատակների համար: Շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (40 մարդ) և կազմել 701.79մ³/շին.ժամ կամ՝ 0.964մ³/օր: Ջրանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի 225մ³/շին.ժամ կամ՝ 0.75մ³/օր: Ջրօգտագործումը կկազմի ընդհանուր 926.79մ³/շին.ժամ:

Երկաթբետոնե հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 48.000մ³ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ, որից 45.000մ³ ծավալով հողային զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր, իսկ մնացած 3.000մ³ կօգտագործվի որպես հետլիցք: Հողային աշխատանքների ընթացքում կառաջանա 600մ³ հողաբուսաշերտ: Հողի բերրի շերտի օգտահանումը և պահպանումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներով:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում՝ կենցաղային աղբն՝ է՝ 1.200-1.300կգ և շինարարական աղբը՝ 1.300մ³: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կենցաղական մոտակա աղբավայր:

Նոր կառուցվող բնակելի համալիրի շինարարության ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանագրով նկատված են հիմնեն շինարարական աշխատանքների ընթացքում անօրգանական դիրքությունների ժամանակավոր արտանետումներով, որոնք կարող են առաջանալ հողային



աշխատանքներից և տեխնիկական միջոցների աշխատանքից՝ դիզվառելիքի այրման արդյունքում: Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր ազդեցությունները կանխարգելելու և շրջակա միջավայրի պահպանության նպատակով նախատեսված է.

– շինարարական աշխատանքների /փոշու առաջացման աշխատանքներ/ ընթացքում, փոշենստեցման նպատակով, ջրանի իրականացում տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2-3 անգամ,

– ջրանը հաշվարկել այնպես, որ չառաջանա մակերևությային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,

– շինարարական գործընթացում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, այդ տարածքներում ապահովել սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ,

– օգտագործվող մեքենաներից յուղերի ու քայուղերի արտահոսքը կանխելու և դրա հետևանքով հողերի հնարավոր աղտոտումից խոսափելու նպատակով՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ կանցկացվեն հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ,

– աղմուկի և թթառումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

– փակ ծածկով մեքենաներով սորուն նյութերի տեղափոխում (ավագ, խճ, հող և այլն),

– փոշու տարածումը կանխարգելելու նպատակով՝ սորուն նյութերի պահեստները համապատասխան բարձրությամբ թաղանթով ծածկում,

– շինարարական նյութերի տեղադրում բետոնապատ մակերեսի վրա,

– մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

– տեղումներից առաջացող շինարարական հոսքաջրերի ուղղորդում պարզաբան: Անձրևաջրերի նստեցման պարզաբանը գտնվելու է շինարարական իրապարակին կից: Այն իրենից ներկայացնում է պլաստմասե 25խմ ծավալով տարողություն, որի ծավալը հաշվարկվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա: Պարզաբանում տեղի է ունենալու մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը օգտագործվելու է տարածքի ջրանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը հեռացվելու է՝ որպես շինաղբ,

– աշխատանքների ավարտից հետո մաքրել բոլոր տարածքները և առաջացած թափուները տեղափոխել ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,

– կանաչապատումն իրականացնել համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան հատկացնել 350 հազ. դրամ, ամբողջ շինարարական ընթացքում՝ 700 հազ. դրամ: Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը կրարեկարգվի և կկանաչապատվի:

Կանաչապատումը իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ, որի համար ընկերության կողմից մշակվել է համապատասխան բարեկարգման, կանաչապատման և արդիականացման դենդրոնախաճ՝ սիզամարգ՝ 2652քմ, ծաղկանոց՝ 100քմ, ծառատեսակներ՝ թվով 73:

Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց: Ցանցում առկա են կաթելային ոռոգման հանգույցներ, նաև նախատեսված են ուսուինե խողովակներ անբուջությամբ



ոռոգում կազմակերպելու համար: Ոռոգման նպատակով ջրամատակարարումը կիրականացվի ավտոմեքենաներով, պայմանագրային հիմունքներով:

Պատճառաբանական մաս. Նախնական գնահատման հայտի փորձաքննական գործնթացին մասնակցել է քաղաքաշինության կոմիտեն: Դիտողությունների և առաջարկությունների արդյունքում հայտը լրամշակվել է: Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, <<օրենսդրությամբ սահմանված կարգով անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կրեն ժամանակավոր բնույթ: Ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Քանդման և շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել <<օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:

- Շինարարության ընթացքում անհրաժեշտ է պահպանել բնապահպանական միջոցառումների և մշտադիտարկման պլանով նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և պահպանումը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԳԼՈԲԱԼ ՊՐՈԵԿՏ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Գյուղական փողոց 27 հասցեում նախատեսվող բազմահարկ բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ



Հ. Ալեքսանյան